

Մարզպետարան դիմաձ քաղաքացիների դիմումների,
բողոքների 2020թ.-ի ամփոփագիր

2020թ-ի ընթացքում ստացվել է **838** դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել **611** քաղաքացի: **557** քաղաքացու խնդրանք բավարարվել է, **54**-ինը՝ մերժվել, 2020թ-ին արդեն իսկ օգնություն ստացած լինելու պատճառով:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է **72** քաղաքացի, որից 45-ի խնդրանքը բավարարվել է, 27-ինը՝ մերժվել, /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի **11** դիմումից դրական պատասխան է ստացել **8**-ը, երեք քաղաքացու դիմում մերժվել է:

/Առողջապահական հարցերով դիմաձ քաղաքացիները մերժվել են պետպատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

դ/ Աշխատանքի հարցերով դիմաձ **16** քաղաքացիներից 10-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 6 դիմում մերժվել է, /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է **26** քաղաքացի բոլորի խնդրանքն էլ բավարարվել է:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել է **23** քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով դիմաձ **21** քաղաքացիներից 18-ի դիմումին տրվել է դրական պատասխան, 3 դիմում ընթացքի մեջ է:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է **46** քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Այլ բնույթի **12** դիմում է ստացվել:

ժ/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ